ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզի տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում կատարվող աշխատանքների վերաբերյալ

2022թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել է 239.0 կմ ճանապարհների ձմեռային և 178.6 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 137.8 մլն. դրամ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում 137.8 կմ ձմեռային և 56.4 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 74.8 մլն. դրամ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ98.0-կմ101.4 հատվածի հիմնանորոգում (3.4կմ) - 600.0 մլն. դրամ: Կատարվել է աշխատանքների 50% - ը

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների կառուցման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ.

2. Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108.4 - կմ126.1 հատվածի հիմնանորոգում (17.7կմ) - 3 000.0 մլն. դրամ

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների եզրաքարերի տեղադրման, մայթերի կառուցման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ.

3. Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150.7-կմ167.6 հատվածի հիմնանորոգում -2 897.0 մլն. դրամ

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների երթևեկելի մասի նախապատրաստական, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2022թ.

4. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ122-կմ124 հատվածներում հողային պաստառի փլուզված հատվածների պաշտպանիչ հենապատերի և կառուցվածքների վերականգնում - 58.8 մլն. դրամ (մրցույթային է)

5. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 123+500 հատվածում վերգետնյա անցման կառուցում - 40.0 մլն. դրամ (մրցույթային է)

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամով իրականացվում են հետևյալ աշխատանքները

1. Ջերմուկ բնակավայրի Ձախափնյակ թաղամասի Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցների վերանորոգում և բարեկարգում - 679.2 մլն. դրամ
Աշխատանքների ավարտը՝ 2022թ.

2. Ջերմուկ բնակավայրի Շահումյան, Վարդանյան, Մյասնիկյան, Ադամյան և Չարենցի փողոցների վերանորոգում, և վերականգնում և <Քարայծ տանող ճեմուղու կառուցում> - 794.3 մլն. դրամ
Աշխատանքների ավարտը՝ 2022թ.

2022 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91.6 – կմ98.0 (6.4կմ) հատվածի հիմնանորոգում 1 150.0 մլն. դրամ (նախագծման փուլում է)

2. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ131.5 - կմ139.0 (7.5 կմ) հատվածի հիմնանորոգում =1 350.0 մլն. դրամ (նախագծման փուլում է)

3. Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ142.0 - կմ 150.7 (8.7 կմ) հատվածի հիմնանորոգում - 1 570.0 մլն. դրամ ( նախագծման փուլում է)

4. Մ-2 (Արենի)-Խաչիկ-Գնիշիկ-Եղեգնաձոր կմ 58.0 – կմ70.0 (12 կմ) հատվածի հիմնանորոգում - 1 800.0 մլն. դրամ ( նախագծման փուլում է)

5. Մ-2 Նորավանքի պատմական հուշարձան (8.1կմ) ավտոճանապարհի հիմնանորոգում - 620.0 մլն. դրամ (աշխատանքները կատարվում են)

6. Մ-2 Հերհեր-Կարմրաշեն ավտոճանապարհի (8.7 կմ) հատվածի հիմնանորոգում - 814.0 մլն. Դրամ (մրցույթը կայացել է)

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսվում է իրականացնել

Հերմոն-Վարդահովիտ 6.2 կմ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ - 700.0 մլն. դրամ (նախագիծը պատրաստ է և քննարկման փուլում է)

Տարբեր ծրագրերով նախատեսված աշխատանքներ
Ընդամենը՝ 16 մլրդ 285.9 մլն. դրամ

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2022թ. առաջին եռամսյակում կազմվել և ներկայացվել է 2023-2025թթ. մարզային (տեղական) և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսական հայտը:

Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և
ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյան